


ԱՐՏԱՇԵՍ ՅՈՒՆԱՆԵԱՆ, «ՍԻՐԷՔ ՄԻՄԵԱՆՑ...»

Posted on February 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Մովսես Ծիրանի, Երեւան

«Վա՛յ ազգիս, որ թփրտում է Թակարդը ընկած թռչունի սման...»

Արտաշես Յունանեան

Երեւան, 1980, Լենինի №2 հանրակացարան:

Յանկարծ, բռունցքի ուժեղ հարուածներով դուռը զարնուեցաւ: Ջղագրգիռ
զգուշութեամբ բացի... «Նինճայ»ի սման գլուխը փաթթած ու երկար վերարկու մը
հագած մէկը, շփոթահար... փոթորիկի սման ներս խուժեց: Հագիւ ճանչցայ,
Յունանեանն էր... աջ ձեռքով բերանը, իսկ ձախով՝ դուռը գոցելէ ետք, դրան քովը
զետեղուած «ռատիօ ընդունիչ»ի թելը անջատեցի ու հասկցուցի, որ հանգիստ ու ցած
ձայնով պետք է որ խօսի... : Այլայլած էր, կը դողար ու կը հեւար... ջուր տոփ... ումպ մը
խմեց, խոր շունչ մը քաշեց ու ըսաւ.

-Մովսես ջան... ինձ հետեւում են...

Ծոցէն հանեց «փաթեթ» մը ու շարունակեց.

--Սա'..., դու գիտես ... մօտդ պահիր մինչեւ որ տեսնենք ի՞նչ ենք անելու, ես պետք է որ
գնամ... Էդ անաստուածները հետեւում են... ինձ ... միայն Գեորգը լուր ունի...

Ըսաւ ու ետ դարձաւ որ մեկնի, սակայն ես թելէն բռնելով ըսի.

--Սպասի'... մի րոպէ կանգ առ...այս ջուրը լրիւ խմէ, ա՛յ այդպէս, հիմա հանգիստ գնա,
առանց աճապարելու... Երեսդ ալ լրիւ բաց, որ կասկած չյարուցես...

Երեխայի սման հնազանդեցաւ, քանի մը անգամ խոր շունչ քաշեց ու խաչակնքելէ ետք
գնաց: Ետեւէն իջայ մինչեւ փողոց, չորս կողմս լաւ մը ստուգեցի... Հետեւող չկար եւ
«հանգիստ» սրտով վերադարձայ սենեակ:

Այդ օրերուն Յունանեանի մօտ սկսած էին հալածախտի նշաններ երեւիլ...:

Պետք էր բան մը ընել: Որոշեցի ժամանակաւոր կերպով կարգ մը հնատիպ գիրքերու
հետ Չարպախ տանիլ այդ ձեռագիրը ազգականներու՝ Հարգալեաններուն քով, ուր
«Հերկելիկ Պապուկը» կար իբրեւ փորձառու ու վստահելի անձնաւորութիւն... :

Ուսապարկիս մէջ լեցնելէ ետք հնատիպ գիրքերն ու «Ձեռագիրը», երբ կը
պատրաստուէի դուրս գալ, ընթացքին մէկը առանց դուռը թակելու, հրեց ու ներս մտաւ:
Գեորգն էր: Առաջին խօսքը եղաւ.

- Հայրս չափազանցում է: Նա չգիտի որ մեզ աւելի են հետեւում քան՝ իրեն: Մինչեւ այն
ատեն որ «Նրանք» այս գիրքից տեղեակ չեն, կարիք չկայ Էդքան մտահոգուելու:
«Նրանք» դժգոհ են մեր ելոյթներից, որովհետեւ մենք ժողովրդի մէջ... տարածում ենք

գաւառից հաւարտած ազգային-յեղափոխական ու ինչպէս նաեւ հոգեւոր երգեր, որոնց աւելի վտանգաւոր են համարում... չգիտես ինչո՞ւ...

-Գերոգ ջան՝ հորդ վիճակը բնական չէ: Նա եւութեամբ հանգիստ մարդ է, դրա համար էլ մտահոգիչ է իր վիճակը: Նա ուղղակի խուճապի մէջ էր... Հարկաւոր է մի բան մտածել...

--Այո, այսպէս չի կարելի շարունակել... տեսնենք...

Գերոգը «Ձեռագիրը» հետը տարաւ:



Մովսէս Ծիրանի եւ Արտաշես Յունանեան, 1978

Առանց ընթերցած ըլլալու տեղեակ էի գիրքի վտանգաւոր բնոյթին ու բովանդակութեան: Այդ պատճառով, տակաւին չաւարտուած՝ այս գիրքը կը պատճենահանուէր ու յաճախ տեղ կը փոխէր... Նոյնի՛սկ քանի մը անգամ գետնին տակ թաղուած էր:

Ամենայնդէպս Յունանեանի «սարսափահար տագնապը» անտեղի չէր: Ան մաս կը կազմէր նաեւ այլախոհներու խմբակի մը, որոնք ճանչցուած էին իբրեւ «Մերժուածներու եօթնեակ»: Ասոնցմէ շփման մէջ էի կայացած դերասան՝ Չարեհ Տէր Կարապետեանին ու անզուգական դասախօս՝ Լեւոն Ներսիսեանին հետ: Խոհեմաբար միւսներու մասին ոչ ես

կը հարցնէի Յունանեանին եւ ոչ ալ ինք խօսքը կը բանար: Այս խմբակի մասին հարկաւոր է առանձին անդրադառնալ, յատկապէս նկատի ունենալով Չարեհի դստեր՝ դերասանուհի Յասմիկ Տէր Կարապետեանի յուշերը:

Հետապնդումներէ հեռու մնալու համար, ի վերջոյ Գեորգը որոշեց իւրը ինքնակամ «աքսորել» գաւառ՝ իր ծննդավայրը, իսկ ինք ելք կը փնտռէր դուրս գալու խորհրդային սահմաններէն...: Եւ իսկապէս յետագային Յունանեան մեկնեցաւ Սպիտակ, ուր նուազագոյն միջոցներով ստեղծեց կերպարուեստի ուսումնարան, իսկ Գեորգը երբ Ռոմէն Կոզմոյեանի ղեկավարութեամբ մեկնած էր հիւրախաղերու՝ ԱՄՆ, հոն քաղաքացիական ապաստարան յայցեց...: Կոզմոյեանը ինչայելու համար Յունանեանի տաղանդին ու անոր ընտանիքին, ձեւը կը գտնէ ու գաղտնի կը պահէ Գեորգի «փախուստը»...: Որպէս զի բացատրելի դառնայ թէ ինչո՞ւ Կոզմոյեան կը դիմէ իրեն համար աննպաստ քայլի մը, բացատրեմ: Առաջին անգամ երբ քովը գացի իբրեւ «Մշակութային Կապի Կոմիտէ»ի նախագահի տեղակալ, ան նախքան ինդրին մանրամասնութիւնները իմանալը, ըսաւ.«Ես գիտեմ դու ո՞վ ես եւ ի՞նչ շրջանակից ես գալիս, դու էլ գիտես որ ես ո՞վ եմ եւ ու՞ր եմ աշխատում... սակայն դա չի նշանակում որ մենք ազգային ընդհանուր շահեր չենք կարող ունենալ...»: Այնպէս որ ես չզարմացայ երբ տարիներ առաջ ան Գեորգի «փախուստի» դէպքը պատմեց ինծի... մեկնելով ... ազգային ընդհանուր շահերէ... :



Արթիլիաս, 1989, Աշուն

Այդ օրերուն ես՝ տնանկի կարգավիճակի մէջ՝ կաթողիկոսարան կ'ապրէի, ուր կը պաշտօնավարէի թէ՛ «Մարտիկեան» վարժարանէն ներս եւ թէ՛ դպրեվանքը : Գարեգին Բ. Վեհափառի հետ շաբաթը անգամ մը կը բարձրանայի Պիքֆայայի վանքը, ու ճանապարհին կը հաղորդակցէինք Սուէտիոյ (Մուսալերան ու Քեսապի) մեր բարբառներով... : Պաշտօնականութենէ դուրս՝ Վեհափառը կենսալից ու կատակասեր բնաւորութեան տեր հաճելի գրուցակից էր:

Երկրաշարժէն շուրջ տարի մը ետք, երբ նոր վերադարձած էր հայրենիքէն, լուր դրկեց իրեն հանդիպիմ: Երբ բարձրացայ վեհարան, տեսայ որ գրասեղանին առջեւ նստած, կլանուած՝ ձեռագիր մը կը թերթատէ...: Որովիցս մտայլ ու մտազբաղ տեսք ունէր, խուսափեցայ հարց տալէ ու... սպասեցի: Քիչ ետք գլուխը վերցուց սեղանին վրայէն... աչքերուս նայեցաւ նշանակալից եւ առանց որեւէ յառաջաբանի գիրքը երկարելով ինձի, ըսաւ.

--Ճանօ՞թ ես այս ձեռագրին:

Ձերքս առի ու սկսայ թերթատել: Մաքուր ու կոկիկ, խնամքով ձեւաւորուած «Պահպանակ»ի վերջին օրինակն էր... : Լռեցի... Վեհափառը շարունակեց.

--Այս երկտողն ալ քեզի ուղղուած է, կարդա'...

Յունանեանը կը խնդրեր, որ ես խմբագրեմ ու հսկեմ գիրքի հրատարակման: Ինքզինքս հաւաքեցի ու ըսի.

--Այս գիրքէն տեղեակ եմ, մեծ հաճոյքով պարտականութիւնս կ'ընեմ...Գիտէի որ Սպիտակ գացած է, սակայն լուր չունիմ իրմէ... Ի՞նք....

--Այո'... կայ, սակայն վատառողջ է թէ՛ ֆիզիքապէս եւ թէ՛ հոգեպէս: Տարի մը առաջ երկրաշարժէն ետք, երբ քովս եկաւ թեւը կապած էր, ձեռքերը կը դողային եւ խօսածը դժուար կը հասկցուէր: Տակաւին նոյն կացութեան մէջ է, հարկաւոր է Ամերիկա ուղարկել բուժման...

Ես դարձեալ լռեցի ու սպասեցի: Վեհափառ հայրապետը ինք եւս քանի մը թոպէ լռելէ ետք գրասեղանին աջ կողմը դրուած տուփէն «սիկար» մը վերցուց, փորձեց վառել, բայց չկրցաւ... «Սիկար»ը ձեռքին ոտքի ելաւ ու ճեմելով շարունակեց.

--Հետեւեալը պատմեցին ինծի: Երկրաշարժէն վայրկեաններ առաջ, յանկարծ նախազգացում մը կ'ունենայ որ աղետ մը պիտի պատահի... անմիջապէս աշակերտներուն կը դիմէ, որպէս զի դուրս գան: Ինք Ուսումնարանի մուտքին կը հսկէ մինչեւ որ վերջին աշակերտը դուս ելլէ...: Բոլորը կը փրկուին, սակայն ինք՝ փլատակներուն տակ կը մնայ: Ժամեր ետք միայն օգնութեան կը հասնին...: Դուն գիտէի՞ր որ կանխազգալու նման յատկութիւններ ունի... :

--Ուղղակիօրէն՝ ո'չ: Արտաքնապէս հանդարտ ու հանգիստ կը թուէր ըլլալ, սակայն իրականութեան մէջ գերզգայուն մարդ էր: Թէեւ յատուկ նախազգացումներու մասին չէր խօսեր, սակայն ամէն տարի քսանըմէկ օր ծով կը պահէր ու այդ շրջանին է որ (իր խօսքերով) ներաշխարհը կը մաքրագործուէր, հոգին կը բիւրեղանար, միտքը կը պայծառանար, կը սկսէր տեսիլքներ ունենալ ու... ստեղծագործել... :



Գր. Նարեկացի

Իմ հետաքրքրասեր ընթերցող՝

Պատմութեան մէջ եղած են արտակարգ ընդունակութիւններու տեր իմաստուններ, չըսելու համար սուրբեր, որոնք իրենք զիրենք մօտիկ զգալով աստուածներուն արտայայտած են համարձակ ու յանդուգն մտքեր, ինչպէս. Գր. Նարեկացի, Տանթ Ալիկերի, Սուամի Վիվեկանանտա, Ժպրան Խալիլ Ժպրան... Եւ ուրիշներ: Յունանեան եւս «Պահպանակ»ի մէջ (շատ հաւանաբար ակնարկելով իր քսանմէկօրեայ ծոմապահութեան) կը յայտարարէ. «Հրաշքով իմ մէջ Աստուած է բնակուում ...» Եւ կամ «Այլափոխուում եմ ինչ որ նոր նիւթի եւ իմ մէջ զգում Սրբազան ոգու Սուրբ գոյութիւնը»: Չէ՞ք կարծեր, որ երբ ենթական գերլարուած պահու մը իր մէջ կը զգայ «Սրբազան ոգու Սուրբ գոյութիւնը», հաւանական է նաեւ, որ լուրջ նախազգացումներ ունենայ...: Նկատի առէք նաեւ, որ ան նման ոգեղինացած վիճակներու մէջ է, որ նկարագարդած ու

իւրօրինակ նկարաշարքեր ստեղծած է, ինչպէս. Տանթէ Ալիւերիի «Աստուածային Կատակերգութիւն»ը, Լեւոն Շանթի «Հին Աստուածները», Գր. Նարեկացիի «Մատենանոց Բարերգութեան»ը, «Հայաստան Դրախտավայր»ը, «Պատարագ»ը, Եւայլն:

«Պահպանակ»ը քրիստոնէական ոգիով ու «Նարեկեան » շունչով գրուած ըլլալով հանդերձ, պէտք եղած ընդունելութիւնը չգտաւ գրասեր հասարակութեան մօտ, ի մասնաւորի անոր համար որ նեղմտութեան սահմաններէն դուրս գալով, համակրօնական ու համամարդկային հաւատքի այնպիսի հարցեր կը շօշափէ, որոնք չեն բացառեր լուսապաշտական միւս կրօնքները, ինչպէս Պուտտիզմը, Հինտուիզմը, Միթրաիզմը, Եւայլն:

Օրինակի համար ան կը խոստովանի որ «Սուրբատեսի, Պօղոս Առաքեալի, Գրիգոր Նարեկացու եւ Սուամի Վիվեկանանտայի Սուրբ հոգիների ներշնչմամբ, եւ նրանց օգնութեամբ էլ ահա արագութեամբ շարժուում եմ ԼՈՅՍԻ ԿՈՂՄԸ (ընդգծումը մերն է)»: Յունանեանին ճիշդ հասկնալու համար, հարկաւոր է նաեւ որ ընթերցողը գաղափար ունենայ նախնադարէն աւանդուած, տիեզերական ու համամարդկային ԼՈՅՍԻ պաշտամունքի մասին, որ իր բիւրեղ արտայայտութիւնը պիտի գտներ Սուրբ Երրորդութեան (Հայր, Որդի եւ Ս. Հոգի) ի բնէ լուսեղէն ըլլալու Սուրբգրային ճշմարտութեան մէջ...: Ահաւասիկ թէ ինչու, ան ընդունելով հանդերձ լուսապաշտական միւս կրօնքներու դրական կողմերը, ամէն բանէ առաջ կը մնար բարեպաշտ քրիստոնէայ մը: Այնպէս որ, ճիշդ չէ զինք մեղադրելը անոր համար որ, ինք հեթանոս Սուրբատեսն ու Հինտու Սուամի Վիվեկանանտան համահաւասար Սուրբեր կը համարէ Պօղոս Առաքեալն ու Գրիգոր Նարեկացին...:

Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը, գիտնալով հանդերձ այս բոլորը, ամենայն լայնախոհութեամբ մօտեցաւ հարցին, ընդունեց, ըմբռնեց եւ գիրքը գնահատելէ ետք իր ամբողջութեանը մէջ՝ յանձնեց հայ ընթերցողի դատաստանին: Հակառակ այս բոլորին, Յունանեան շատերու կողմէ կա՛մ չհասկցուեցաւ եւ կա՛մ ալ սխալ հասկցուեցաւ... ու թէեւ մեր մօտ մնաց լուսանցքի վրայ, սակայն օտարները (Շարլ Պերնէ, Ալ. Կամենսկի, Ա. Չանձեւ, եւ ուրիշներ) շատ անելի բարձր գնահատեցին ու արժեւորեցին անոր արուեստը, քան մենք՝ հայերս:



Գանձասար

«Բաղրամեան» փողոց, 1978, Աշուն:

Այդ տարիներուն մենք՝ քանի մը սփիւռքահայ ուսանողներ (Ժանօ, Մարտիկ, Պօղոս, Յովիկ, Յակոբ եւ ուրիշներ...) սովորութիւն ունեինք շաբաթը անգամ մը որսի երթալու, եւ առնուազն անգամ մըն ալ հաւաքներ կազմակերպելու Վարուժան Խտըշեանի բնակարանը, ուր ներկայ կ'ըլլային նաեւ բազմաթիւ գրողներ, դերասան-դերասանուհիներ եւ այլ արուեստագէտներ ու մտաւորականներ: (Ինչպէս. Մուշեղ Գալշոյեան, Յակոբ Յակոբեան, Հրանդ Մաթեւոսեան, Լեւոն Ներսիսեան, Լեւոն Թուփիկեան, Լեւոն Չուքասըզեան, Պետրոս Ապաճեան, Ռազմիկ Դաւոյեան, Ռուբէն Հախվերտեան, Վովա Մսըրեան, Գուժ Մանուկեան, Աննա Պետրոսեան, Ալիք ու Անահիտ Թոփչեաններ, ինչպէս նաեւ, միւս Ալիքն ու Ալիսը, ու տակաւին դերասանուհիներ՝ Թամարը, Յասմիկը, Նարինէն, Մարինէն, Գոհարիկը... : Այո', գիտեմ, սիրելի ընթերցող՝ թէեւ շարքը երկար եղաւ, սակայն կարելի է անելի երկարել... : Շնորհիւ Սօս Սարգսեանի ու Վարուժան Խտըշեանի ունեցած լայն ժողովրդականութեան, Վարուժի բնակարանը իբրեւ հաւաքավայր ակումբի բնոյթ ստացած էր, տեսակ մը «Վերնատուն»: Բայց նկատի առեք որ բոլորը չէ որ նոյն օրը ներկայ կ'ըլլային... :

Այդ օր ներկայ էին նաեւ հայր ու որդի Յունանեանները: Երբ կենացները կը թեժանային մենք բնականաբար կը սկսէինք երգել նաեւ ազգային-յեղափոխական երգեր, սակայն Յունանեաններու ներկայութեան երեկոն տարբեր բնոյթ կը ստանար: Գեորգը թէ կ'երգեր եւ թէ իր անբաժանելի ջուրթակով կ'ընկերանար Արտաշեսի երգեցողութեան: Իսկ երբ հերթը կու գար արեւագալի շարականներուն, Արտաշեսը կ'այլափոխուէր, դեմքը կը պայծառանար, կը մանկանար ու երանութեան անեղծ ժպիտ մը կը գծագրուէր անոր

դեմքին... կարծեք թէ հաղորդակցութեան մէջ կը մտնէր «իր Սուրբերուն» հետ...: Անոր կուսական ու «հում» ծայրը «Սրբազան ոգու» խորքերէն կ'արձագանգէր կարծեք, ու իբրեւ լուսեղէն թրթիռ, կը բաշխուէր մեր հոգեմտաւոր պրիսմակներուն վրայ, ու մենք կախարդուած՝ կը փոխադրուէինք այլ ոգեղէն ոլորտներ...: Նման հոգեպարար ու ծիսականացած պահու մը, Վարուժանը չդիմացաւ ու բացագանչեց.

-- Աստու՛ած իմ... Կաթողիկոս ըլլալու մարդ է ասիկա.... հաւատացեք ինծի...

Իսկ միւս կողմէ Սօսը շարունակեց.

--Ասում են թէ Սուրբեր չկան... չեն լինում.. :

Այո՛, իմ հաւատացեալ ընթերցող,

Կարելի չէ կասկածի տակ առնել Յունանեանի «կայծակնամաքուր» (բառը Նարեկացիինն է) հաւատքն ու ազգի հանդէպ սերը, որոնք կը տարածուին համամարդկային ու տիեզերական ոլորտներու վրայ... :

Ահաւասիկ թէ ինչո՛ւ անոր արուեստը ուրոյն է ու հզօր իր արտայայտչականութեամբ, եւ առինքնող ու հմայիչ իր խորութեամբ... :

Բարութեամբ համակուած այս իմաստասերը, համոզուած էր որ չարութիւնն ու բռնութիւնը կը ծնին «աթէիզմ»-էն, ու յականէ անուանէ իբրեւ անհաւատ ու չարեաց արմատ, առաջին հերթին կ'ամբաստանէր «հոգի կեղեքող բոլշեւիկները»: Բոլոր պարագաներուն սակայն, ան յռետես մը չէր, այլ կը հաւատար բարութեամբ համակուած՝ ԼՈՅՍԻ վերջնական յաղթանակին ու հաստատելէ ետք.

«Որ անտեղի են զէնքերը բոլոր ...

«Եւ դաժան մարդկանց յաղթանակները՝ որպէս սին ցնորք ... :

Կը յորդորէ մեզ.

«Ո՛վ իմ տառապած եւ Սու՛րբ ժողովուրդ,

«ՍԻՐԷ՛Ք ՄԻՄԵԱՆՑ,

Որ ԼՈՅՍը ծագի աշխարհի վրայ բոլոր կողմերից:

«ՍԻՐԷ՛Ք ՄԻՄԵԱՆՑ: Այսօր եւ վաղը: Միշտ եւ միշտ: Ամէ՛ն»:

Ամէ՛՛՛ն...

3.4.

Իմ գիտակից ընթերցող՝ Չե՞ս կարծեր որ այսօր եւս մենք ազգովին կը շարունակենք թիրտալ «**Թակարդը Ընկած Թռչունի Նման**»...

Եւ վա՛յ մեզի եթէ **Գիտելը Միմեանց...** Այսօր եւ վաղը: Միշտ եւ միշտ: Ամէ՛ն»:

There are no comments yet.